

17 FEB 2010

ԾՐԱԳՐԵՐ ՈՒ ՍԵՓՈՒԱՄՇԱԿՈՒՄՆԵՐ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱԿՏԻՎ Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ
ԿԱՐՃԱՏԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՈՒ ԾՐԱԳՐԻ
ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՅԵՐԿՏՈՂ

338.98

9-68

ՊԵՏԱԴԱՐԱՆ 1931

ՅԵՐԵՎԱՆ

18.02.2014

31.934 38.38

ԾՐԱԳՐԵՐ ՈՒ ՄԵԹՈԴԱՄՇԱԿՈՒՄՆԵՐ

702

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐՃԱՏԵՎ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՈՒ ԾՐԱԳՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՅԵՐԿՏՈՂ

Դասընթացների նպատակն այն է, վոր կոլտնտեսական ստորին ակտիվին ծանոթացանի կուսակցության 16-րդ համագումարի ու Կ.Կ. և ԿՎՀ-ի դեկտեմբերյան միացյալ պլենումի այն վորոշումներին, վորոնք գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցմանն են վերաբերում, ինչպես և ծանոթացնի կուսակցության այն հերթական անելիքներին, վորոնք կոլտնտեսական շինարարության բնագավառին են վերաբերում:

Դասընթացները հաշվված են 12 աշխատանքի որվա համար, որական 8-ական ժամ, ընդամենը՝ 96 ժամ: Ամեն մի թեմայի բոլոր վերահիշյալ ժամերի կիսից վոր պահադ պետք է հատկացվի ունկնդիրներին կողմից ինքնուրույն կերպով նյութ վերամշակելու գործին, իսկ մնացած ժամանակը հատկացվում է գրույցների: Ձրույցը մոտավորապես 2 ժամ է խլում: Այսպիսով, որինակ՝ այն թեմայից, վորին 6 ժամ է հատկացված, 4-ը դնում է նյութ մշակելու վրա, իսկ 2-ը՝ գրույցի. այն թեման, վորին 8, 12, 16 ժամ է հատկացված, բաժանվում է 2-3 մասի, ամեն մի մասից առնվազն 2 ժամ դնում է պատրաստվելու և 2 ժամ էլ՝ գրույցի վրա, կամ 4 ժամ պատրաստվելու և 2 ժամ գրույցի վրա:

Պարապմունքներին նախապատրաստվելը պետք է կատարվի դասավիճակով, զեկավարությամբ, վոր պետք է ողնի ունկնդիրներին աշխատանքներին՝ խորհուրդներ տա նրանց:

ՊԵՏՏՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏ. 1574
ՊԱՏՎԵՐ 1672
ԳՐԱՌԵՊՎԱՐ 6299 (բ)
ՏԻՐԱԺ 2000

33993

Ամեն մի թեմա մշակելուց առաջ ղեկավարը ներածական կարճ խոսք է ասում, վորով ունենդիրներին մատնանշում է թեմայի հիմնական (կապակցող) հարցերն ու նյութ մշակելու կարգը: Ամեն մի թեմայի վերջում ղեկավարը յեզրափակման խոսք է ասում, վորով ընդհանրացնում է նյութը և յեզրակացություններ է անում այն բոլոր պարապմունքներից, վորոնք տվյալ թեմային են վերաբերել:

Իբրև հիմնական ձեռնարկ, մատնանշված են 16-րդ կուսհամագումարի նյութերը—ԿԿ, քաղհաշվետվությունը, ընկ. Յակովլևիի ղեկուցումը, ընկ. Շվեբնիկի ղեկուցումը և ԿԿ ղեկավարության պլենումի ու ՄԿ IV պլենումի բանաձևերը՝ ընկ. Շվեբնիկի և ընկ. Յակովլևիի ղեկուցումները շուրջը: Այս նյութերն ու ընկ. Ստալինի «Գլխապտույտ հաջողություններից» և «Պատասխան ընկ. կոլտնտեսականներին» հոգվածներն անշուշտ պետք է մշակվեն ունենդիրների կողմից: «Աշխատանքի կազմակերպումը կոլտնտեսություններում» թեմայի համար անշուշտ պետք է մշակվի նաև «Գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը»: Այն դեպքում, յերբ եջերը ցույց տված չեն, ղեկավարն ինքը պետք է համապատասխան տեղերն ընտրի և ցույց տա ունենդիրներին: Իբրև դասադիրք, մատնանշված է Կերթենցեվի ու Լեոնտեվի «Լենինիզմի ալլուրները»: Այս գիրքը կարելի չէ փոխարինել Ուխտովի համանուն գրքով: Բացի վերոհիշյալ գրականությունից, պետք է ոգտագործել նաև Մոսկվայի մարդի կոլտնտեսական շարժման վերաբերող լրագրական ընդհանուր նյութերը: Պետք է ոգտագործել նաև տվյալ շրջանին և համապատասխան խմբակներին վերաբերող խորհանուչ-նարարության տվյալները: Խորհուրդ է տրվում լսել տվյալ շրջանի խորհանուցությունների, կոլտնտեսությունների և մեքենատրակտորային կայանների (ՄՏԿ) ղեկուցումները:

Ագրո և գոտրագիտության 10-րդ թեման կարող է

ծառայել իբրև սխեմա՝ գյուղատնտեսների հետ ունենալիք 2-3 զրույցի հետևյալ թեմայի. Ի՞նչ բան է ագրո-միներմումը և վերջինիս նշանակությունը: Այսպիսի զրույցներին պետք է մասնակից դարձնել գյուղատնտես. սին ու անասնաբուժին: Զրույցներ ունենալիս պետք է շեշտել, վոր ագրոտեխնիկական նախամիջոցները լայն չափերով կարելի չէ իրականացնել միմիայն կոլեկտիվ ձևով գյուղատնտեսություն վարելու դեպքում:

Բոլոր թեմաների շուրջը պարապմունքներ ունենալու ժամանակ կարելի չէ առաջ քաշել մոտակա ցանքի կամ պանիայի խնդիրները, իբրև գյուղատնտեսությունը սոցիալիստական ձևով վերակառուցելու աշխատանքի մի մասը: Այս բանը մանավանդ կարեվոր է, համաձայն ուսումնական պլանի 2 և 3 թեմաների, դեպի կոլտնտեսությունները նոր հոսանք կազմակերպելու հետևանքով:

Ծրագրի բոլոր թեմաների համար, վորտեղ այդ անհրաժեշտ է, պետք է ոգտագործել ղննական ձեռնարկներ. հնդամյակի, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման դիագրամներ և աղյուսակներ, ագրոգոմմինիմումի ձեռնարկներ և այլն:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐՁԱՏԵՎ, ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿ. ՊԼԱՆՆ ՈՒ ԾՐԱԳԻՐԸ

Ժամանակի հաշիվ—12 աշխատանքի օր, 8-ական ժ. որական

Թեմա

Ժամ

1. Յերկրի ինդուստրացումն ու գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղիները: 2 պարապմունք 8
2. Կոլեկտիվացման գլխավոր արդյունքներն ու հետագա խնդիրները: 2 պարապմունք (այս պարապմունքներն առանձնապես սերտ կապ պետք է ունենան դարնանացանի կամ պանիայի հետ) . . . 12

3. Խորհրդատեսութեան թիւերն ու ՄՏԿ դերն ու անելիքը դիւղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման գործում: 1 պարագրֆում . . . 8
4. Գյուղի դասակարգային պայքարը նոր ժամանակայրջում: 1 պարագրֆում . . . 6
5. Աշխատանքի կազմակերպումն ու յեկամբ տի բաշխումը կորսնտնտեսութեան թիւերում: 2-3 պարագրֆում . . . 16
6. Խորհուրդներին դերն ու անելիքները՝ վերակառուցողական շրջանի պայմաններում: 2 պարագրֆում . . . 8
7. Արհմիութեանները նոր դարաշրջանում 2 պարագրֆում . . . 12
8. Կուսակցութեանը բանվոր դասակարգի անհաղթելի և պայքար յերկու ճակատի վրա: 2-3 պարագրֆում . . . 12
9. Ինտերվենցիայի նախապատրաստումը ԽՍՀՄ-ի դեմ և յերկրի պաշտպանութեան խնդիրները: 1 պարագրֆում . . . 8
10. Ագրո և դոգդրագրիտութեան (2-3 գրույց դիւղատնտեսի հետ) . . . 12

1-ԻՆ ԹԵՄԱ. ՅԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՅՈՒՄՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ

1-ԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ. Ինդուստրացման արագ տեմպ թերադրող արտաքին ու ներքին պայմանները: Ինդուստրացման բայլչեկյան տեմպերի նշանակութեանը՝ պրոբետարական պետութեան տնտեսական անկախութեանն ապահովելու և սոցիալիստական եկոնոմիկայի հիմքը կառուցելու համար: Ինդուստրացումը վորպես դիւղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման բանալի: Մանր արդիւնաբերութեանը վորպես թեթև և ինդուստրացման վերելքի հիմք: Տեխնիկական տնտեսական տեսակետից կապիտալիստական առա-

ձաւոր յերկրներին պատմական կարճ ժամանակամիջոցում հասնելու և նրանցից անցնելու անհրաժեշտութեանը:

Հնգամյակը վորպես սոցիալիստական հասարակայնութեան կառուցելու պլան: Ինդուստրացման արդիւնները՝ հնգամյակի առաջին յերկու տարւոյ վերջում: Մոսկւայի մարզի արդիւնաբերութեան ու դիւղատնտեսութեան զարգացման տվյալները:

Հնգամյակը 4 տարում, իսկ վորոշ ճուղերում եւ 3 տարում կատարելու հնարավորութեանն ու անհրաժեշտութեանը: Յոթամյա աշխատանքի ուրը, անընդհատ արտադրութեան անցնելը, սոցիալիստական մրցումը, հարվածայնութեանը բանվոր դասակարգի ձեռքին վորպես լրացուցիչ միջոցներ, վորոնք արագացնում են հնգամյակի կատարումը: Բանվոր դասակարգի միժակի բարեկալումը: Բանվոր դասակարգի քանակական զգալի աճումը: Գործազրկութեան վերացումը:

Հնգամյակի 3-րդ տարւոյ գլխավոր ցուցանիշները: Կուսակցական, խորհրդային, արհմիութենական ու տնտեսական կազմակերպութեաններին անելիքները՝ 1931 թ. պլանը կատարելու համար միջոց պայքարի գործում:

Աջ և «ձախ» ուղորտունիստների թեորիայի սնանկութեանը՝ ինդուստրացման հաջողութեանների առաջ: Պայքարը՝ աջերի ու «ձախերի» և աջ-«ձախական» դրույթների դեմ, ինդուստրացման տեմպերի հարցում, վորպես կուսակցութեան գլխավոր պծի իրականացման հիմնական պայման:

2-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ. Լենինի կոոպերատիւ պլանի բնութագրերը: Գյուղատնտեսութեան զարգացման յերկու ուղին— կապիտալիստականը և սոցիալիստականը: Յերկրագործութեան ասպարիզում խոշոր սոցիալիստական արտադրութեան ստեղծելը՝ խորհրդային շինարարութեան, ՄՏԿ-ների շինարարութեան և միջակներին ու չքավորներին կոլտնտեսութեաններին մեջ միացնելու

միջոցով: Սոցիալիստական ուղին, վոր հետզհետե լիկ-
վիդացնայի յե յենթարկում հենց այն հողը, վորով
կապիտալիզմն ե սեղում: ԽՍՀՄ-ի տնտեսության մեջ
գոյություն ունեցող տնտես. գանազան կառուցվածք-
ների հարաբերականության փոփոխությունը՝ կոտրն-
տեսությունների և խորհրդատեսությունների մասսայա-
կան զարգացման հետեանքով: Կուսակցության նոր
լոգոնքը՝ գյուղում խորհրդային իշխանության հենա-
րան ունենալու մասին: Համատարած կոլեկտիվացման
չրջաններում և այս հիման վրա կուլակին սահմանա-
փակելու և վտարելու քաղաքականությունից, իբրև
գլխավոր լոգոնք, կուլակությունը, վորպես դասա-
կարգ, վերացնելու քաղաքականությանն անցնելը: Վոչ
համատարած կոլեկտիվացման չրջանում, իբրև ոժան-
դակ լոգոնք, գյուղի կապիտալիստական տարրերին
սահմանափակելը և նրանց այնտեղից վտարելը: Համա-
տարած կոլեկտիվացումը մինչև հնգամյակի վերջը
հաջողությամբ ավարտելու գլխավոր նպատակը: Կոլեկ-
տիվացման բարձր տեմպերի անհրաժեշտությունը: Կո-
լեկտիվացումը կատարելու ժամկետներն ու տեմպերը,
վորոնք ԿԿ-ի ղեկավարության պլենումն ե վորոշել:

Լենինի կոոպերատիվ պլանի աջ ոպորտունիստա-
կան խեղաթյուրումները: Հակալենինյան թեորիան՝
սոցիալիզմի մեջ կուլակի ներաճման մասին: Պայքա-
րի անհրաժեշտությունը՝ թե այս տեսության և թե
վերջինս գործնական աշխատանքում կիրառելու դեմ:
Աջերի դրույթը՝ թե կուլակային տնտեսությունների
վերաբերյալ և թե կապիտալիստական հարաբերու-
թյունների զարգացման վերաբերյալ՝ գյուղատնտե-
սության բնագավառում:

Տրոցկիստական դրույթները՝ գյուղացիական
տնտեսության նկատմամբ: Մեր յերկրում սոցիալիզմ
կառուցելուն չհավատալը: Տրոցկիստների կողմից
Լենինի կոոպերատիվ պլանը ժխտելը: Կոնդրատեվ-
չինսան և իր պայքարը՝ գյուղի զարգացման կապիտա-

լիստական ուղիների համար: Աջերի ու տրոցկիստների
տեսականների և կոնդրատեվյան ծրագրի ազդակցու-
թյունը՝ գյուղատնտեսության բնագավառում:

2-րդ թեմա. ԿՈԼԵԿՏԻՎԱՅՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԱԳԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1-ին ՊԱՐԱՊՄՈՒՆՔ: Կոլտնտեսական չարժման
վերելքի բնութագիրը: Գլխավոր մասսաների չրջա-
դարձը դեպի սոցիալիզմ: Աջերի ոպորտունիստական
պնդումները, թե գյուղատնտեսության մեքենայա-
ցումը պետք և հաջորդի կոլեկտիվացմանը և վոր կո-
լեկտիվացման տեմպերն ուղղակի կախված են տեխ-
նիկայի բազայից: Գյուղացիական արտադրական
միջոցների ուղղակի կոոպերացումը, վորպես մի խո-
շոր քայլ դեպի աշխատանքի արտադրողականության
ու բերքատվության բարձրացումը՝ ժամանակակից
մեքենային տեխնիկայի վրա հիմնված՝ սոցիալիստա-
կան արտադրության անցնելուն նախապատրաստվելու
գործում:

ԿԿ. ցուցմունքները՝ կոլեկտիվացման մեթոդների
ու տեմպերի մասին: Կուսակցության քաղաքականու-
թյան խեղաթյուրումը՝ վորոշ կուսկազմակերպու-
թյունների, մանավանդ Մոսկվայի կազմակերպու-
թյան կողմից, 1930 թ. դարնանը՝ կոլտնտեսության
չինարարության ասպարիզում—կամավորության ըս-
կրդունքների խախտում, կոլեկտիվացման ժամկետ-
ների արագացում՝ առանց այս մասին բավարար պայ-
մաններ ունենալու, միանգամից կոլտնտեսական ա-
վելի բարձր ձեվերի—կոմունաների հասնելու ճրգ-
տում: Շեղումների «ձախ» ոպորտունիստական, հա-
կամիչակային ելույթունը և սրանց ահադին վտանգը
կոլեկտիվացման և բանվոր դասակարգի ու գյուղա-
ցիության գլխավոր մասսաների դաշինքի ամրապն-
դումը: Կ.Կ. ցուցմունքներն ու ընկ. Ստալինի հող-
վածները՝ ուղղված կուսակցական գծի սխալներն ու

խեղաթյուրումներն ուղղելուն, այն սխալներն ու խեղաթյուրումները, վոր 1930 թ. գարնանը տեղի ունեցան մի շարք կուսկազմակերպություններում և մասնավորապես Մոսկվայի մարզում: Կոլտնտեսությունը, վորպես տնտեսության սոցիալիստական տիպ, վոր ձևավորում է սոցիալիստական արտադրական հարաբերությունները: Կեղծ կոլտնտեսությունը, վորպես կուսակային տարրերի կողմից կոլտնտեսությունը խցկվելու մի ձև:

2-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ: Կոլեկտիվացման արդի ժամանակաշրջանն ու կոլտնտչարժման ձևվերը: ՄՅՅ-ը, վորպես կոլտնտեսության պարզ ձև: Գյուղատնտեսական արտելը, վորպես տվյալ ժամանակաշրջանի կոլեկտիվացման հիմնական ողակ: Գյուղատնտեսական արտելը, վորպես տվյալ ժամանակաշրջանի կոլեկտիվացման հիմնական ողակ, Մոսկվայի մարզի համար: Խորհրտնտեսական ու կոլտնտեսական հետադադարացումը, վորպես առաջնակարգ խնդիր: Կոլեկտիվացման նոր վերելք պատրաստելու և մոցներու գլխավոր սկզբունքները-կոլտնտչինարարություն՝ կամավոր հիմունքներով միայն, կոլտնտեսության ձևվերի, շրջանների առանձնահատկությունների ու տնտեսության ճյուղերի համապատասխանություն: Պայքարի անհրաժեշտությունը՝ աջ ուղորտունիստների այն ձգտումների դեմ, վորով գյուղատնտեսական արտելը, — վորպես տվյալ շրջանի կոլեկտիվացման գլխավոր ողակ, — ուղում են փոխարինել ՄՅՅ-երով: Պայքարի անհրաժեշտությունը՝ կոլտնտչարժման, ՄՅՅ-երի ստորին ձևվերն արտելների մեջ գերաճելուն համար: Կոլեկտիվացման բարձր ձևվերի (կոմունայի) անցնելն այն դեպքում միայն, յեթե կոլտնտեսության անդամները համաձայն են և յեթե տնտեսական անհրաժեշտ նախադրյալներ կան: Պայքարի անհրաժեշտությունը՝ կոլտնտչարժման ասպարիզում յերեմյան յեկող «ինքնահոսի» թերիայի ու պրակտիկայի դեմ: Կոլեկտիվացման աշխատանքը, վորպես

գյուղատնտեսական կոոպերացիայի հիմնական խնդիր: Չքավորության շրջանում կատարվող աշխատանքի ու ժեղացումն ու խորհուրդների, ՄՅՅ-երի և այլ առանձին արտելների մեջ չքավորությունը կազմակերպելու նշանակությունը՝ կոլտնտչարժման ամրապնդման համար պայքար մղելու գործում: Կոլտնտեսականների ու անհատականների ճիշտ փոխհարաբերություններ սահմանելը: Չքավորների ու միջակների — կոլտնտեսությունից դուրս յեկածների նկատմամբ ճիշտ վերաբերմունք սահմանելը: Կուսկի վրահարձակումն ու ժեղացնելը: Կոլտնտեսությունների արտոնությունները: Գյուղություն ունեցող կոլտնտեսությունն ամրապնդելու և տեխնիկական ավելի ու ժեղ բազայով ապահովելու անհրաժեշտությունը: Այս գործում և նոր կոլտնտեսություններ, ՄՅՅ ու խորհրտնտեսություններ ստեղծելու գործում ունեցած և ունենալիք դերը: Կոլտնտեսական կազրեր ստեղծելը: Չհազարականների դերը: Չհազարականների դեմ յերեմյան յեկող բյուրոկրատական վերաբերմունքի դեմ պայքար մղելը: Աշխատանքի ճիշտ կազմակերպումը, յեկամուտների ճիշտ բաշխումն ու անհատական տնտեսություններին կոլտնտեսականների նյութական վերելքին ծանոթացնելը չքավորների ու միջակների նոր խավեր կոլտնտեսությունների մեջ գրավելու կարեւորագույն մոմենտն է:

3-րդ ԹԵՄԱ. ՄՏԿ ԴԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.

Յերկրի ինդուստրացման հետագա ծավալման հիման վրա գյուղատնտեսությունը մեքենայացնելը ու տրակտորայացնելը կարևոր խնդիր է: Տրակտոր, կոմբայն և գյուղատնտեսական ալլ մեքենաներ արտադրող նոր գործարաններ կառուցելն ու հներն ընդարձակելը: ՄՏԿ-ները, վորպես գյուղացիական գլու-

խափոր մասսաները կոլեկտիվացման ճանապարհի վրա
դնող հզոր ընթացիկներ: ՄՏԿ գործունեությունն ապագա-
նեք: ՄՏԿ կողմից կոլտնտեսություններն ու մենա-
տնտեսներին—չքափորներին ու միջակներին սպասա-
կելը: ՄՏԿ-ները, վորպես գյուղատնտեսությունը
տնխնիկապես վերազինող բազաներ: ՄՏԿ-ները, վոր-
պես խոշոր սոցիալիստական հողագործություն կադ-
մակերպելու հենակետեր: ՄՏԿ-ների հետագա ամրա-
պնդման ու զարգացման խնդիրները: Շրջանների
մասսայական աշխատանքը ՄՏԿ-ների շուրջը և ՄՏԿ-
ներ կազմակերպելու շուրջը: Մեքենատրակտորային
կայանների շինարարությունը Մոսկվայի մարզում:

Երկտրոֆիկացիայի նշանակությունը գյուղա-
տնտեսության սոցիալիստական վերակառուցման գոր-
ծում:

Խորհտնտեսությունների, իբրև սոցիալիստական
խոշոր տնտեսությունների դերը հացահատիկային
տնտեսության, անասնապահության ու տեխնիկական
մշակույթների պրոբլեմը լուծելու ասպարիզում: Կոլ-
տնտեսությունների ազդեցությունն իրենց շրջապա-
տող գյուղացիների վրա: Կոլեկտիվացման նպատե-
ները խորհտնտեսությունների ու ՄՏԿ չրջաններում:
Խորհտնտեսությունների դերը կոլտնտեսությունները
բարձր ձևերի փոխադրելու գործում: Խորհտնտեսու-
թյուններն ու իրենց դերը հումքի և պարենափորման
լրժվարությունները լուծելու գործում: Խորհտնտե-
սությունները, վորպես սոցիալիստական խոշոր հո-
ղագործության կադրեր պատրաստող խոշոր հո-
ղագործությունների փորձնական-ցուցադրական
դերը (գյուղատնտեսական օրինակելի ու խոշոր ձեռ-
նարկություններ ստեղծելը, նոր կուլտուրաներ (մը-
շակույթներ) մտցնելը և այլն): Խորհտնտեսություն-
ները, վորպես պրոլետարական հենարան-կենտրոններ
գյուղում: Խորհտնտեսության մասնագիտացումը:

Խորհտնտեսական քաղաքականություն կատարու-

մը 3 տարում: Այլ ոպորտունիստների դրույթների դեմ
պայքար մղելը, այն դրույթների, վորոնք պահանջում
են խորհտնտեսության շինարարության Ֆինանսավո-
րումը կրճատելը: Գյուղատնտեսական մթերքներ վե-
րամշակող ինդուստրիալ ձեռնարկություններ ստեղ-
ծելը: Ավտոմոբիլացման ու քիմիացման նշանակու-
թյունը՝ գյուղատնտեսության սոցիալիստական վե-
րակառուցման գործում:

Ագրոինդուստրիալ կոմբինատները, վորպես գյու-
ղատնտեսության սոցիալիստական ինդուստրացման
ձև: Մոսկվայի մարզի անելիքները կոլտնտեսական
շինարարության գործում:

Կ-Դ ԹԵՄԱ. ԳՅՈՒՂԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅԳԱՐԸ
ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ.

Դասակարգային պայքարի սրումը գյուղում՝ կո-
լեկտիվացում մտցնելու և համատարած կոլեկտիվաց-
ման հիման վրա կուլակությունը, վորպես դասա-
կարգ, վերացնելու հետեվանքով:

Գյուղը յերկու մասի բաժանելը—«կոլտնտեսա-
կանների, վորոնք Խորհրդային իշխանության ամուր
և խեղական հենարանն են գյուղում, չքափոր ու մի-
ջակ վոչ կոլտնտեսականների, վորոնք առայժմ չեն
ուզում կոլտնտեսություն մտնել» (Յակովլև): Կոլ-
տնտեսականների ու անհատ տնտեսությունների միջև
Վճիշտ փոխհարաբերությունն սահմանելու անհրաժեշ-
տությունը: Ներկոլտնտեսական դասակարգային պայ-
քարի տարբերությունը արտակոլտնտեսական դասա-
կարգային պայքարից: Ներկոլտնտեսական դասակար-
գային պայքարի տարբեր ժխտելու ոպորտունիստա-
կանությունը և այս պայքարն արտակոլտնտեսական
դասակարգային պայքարին խառնելը:

Կոլտնտեսությունների տնտեսական անհավասա-
րությունը, վերջինիս անխուսափելիությունը սովյալ
Ժամանակաշրջանում և այս անհավասարությունը վե-

րանալու հեռանկարները: Ներկայտեսական դառա-
կարգային պայքարի տարրերը՝ յեկամուտը բաշխե-
լու, աշխատանքը հատուցելու, բանվորական ուժը
բաշխելու հիման վրա: Կուլակի ազդեցություն մեթոդ-
ները կոլտնտեսականի վրա: Աշխատանքը ներկայումս
տեսական չքափորության մեջ: Այս աշխատանքի բո-
վանդակությունն ու ձևերը, չքափորական ժողովու-
րը, չքափորական խմբակները, աշխատանքը չքափո-
րության մեջ՝ արտադրական խորհրդակցությունների
միջոցով և այլն (նայած կոլտնտեսությունների տըն-
տեսական ձևին):

Կոլտնտեսություններում չքափորական խմբակնե-
րի կատարած պարզ ձևի աշխատանքները բարելավե-
լու և ուժեղացնելու նպատակը՝ պարզ միավորու-
թյունները կոլեկտիվացման բարձր աստիճանին անց-
նելու գործն ապահովելու և բանվոր դասակարգի,
չքափորի ու միջակի դաշինքն ամրապնդելու համար:
Կոլտնտեսության մեջ միջակի կողմից աշխատանքը
բանի տեղ չդնելու անթույլատրելիությունը: Միջակի
տնտեսավարական փորձն ոգտադործելու, նրան ղեկա-
վար աշխատանքի մասնակից դարձնելու և այլ անհրա-
ժեշտությունը:

Անհատ չքափորների մեջ ուժեղ աշխատանք կա-
տարելու անհրաժեշտությունը: Միջակի հետ ճիշտ
փոխհարաբերություն ունենալու, կուլակի դեմ մձու-
կան պայքար մղելու նպատակը՝ գյուղատնտեսության
սոցիալիստական վերակառուցումը հաջող կերպով ի-
րականացնելու համար: Կուլակի դասակարգային պայ-
քարի նոր մեթոդները կոլեկտիվացում մտցնելու հե-
տեվանքով: Վերացվող ու վերացած կուլակի տակտի-
կան: Տնտեսապես վերացած կուլակին քաղաքակա-
նապես մեկուսացնելու նպատակը: Այլ ոպորտունիս-
տական ու «ձախ» ոպորտունիստական պրակտիկայի
հաղթահարումը գյուղում:

5-րդ. Թեմա: ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ
ՅԵԿԱՄՏԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԿՈՒՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1-ին ՊԱՐԱՊՄՈՒՆՔ: Կոլտնտեսությունների աշ-
խատանքի բաժանումն ու մասնագիտացումը: Կոլտըն-
տեսություններում գյուղատնտեսական մեթոդներ վե-
րամշակելու արդյունաբերական ձեռնարկություն ըս-
տեղծելը: Տրակտորի ուժն ամբողջ տարին ոգտադոր-
ծելու խնդիրը: Ներկայտեսական ավելորդ բանուժն
ոգտադործելը՝ կոլտնտեսություններին առընթեր
ձեռնարկություններ ու արհեստանոցներ կազմակեր-
պելու, մեծ աշխատանք պահանջող կոլտուրաների
զարգացնելու, համայնացած անասնապահության և
այլ միջոցներով:

Կոլտնտեսությունների և անհատական տնտեսու-
թյունների աշխատանքի արտադրողականության և
գյուղատնտեսական ինվենտարը ծանրաբեռնելու հա-
մեմատությունը՝ կոնկրետ որինակներով: Աշխատան-
քը բաժանելու սկզբունքները զանազան ձևի կոլտնտե-
սություններում (ТОЗ, արտել, կոմունա): Վարձու
աշխատանքի անթույլատրելիությունը կոլտնտեսու-
թյուններում: Կոլտնտեսությունների ավելորդ բանու-
ժի կազմակերպված ոգտադործումը՝ կոլտնտեսական-
ներին սեզոնային կամ արդյունաբերական ու խորհ-
տնտեսական մշտական աշխատանքի թողնելու միջո-
ցով: Չքափորի ու բատրակի շահերի պաշտպանությու-
նը կողմնակի աշխատանքի թողնելիս: Կոլտնտեսու-
թյան անդամների անձնական կարիքի սպասարկումը:

Կոլտնտեսությունների արտադրողականությունը
բարձրացնելու ուղիները. 1) արտադրանքի նորմաներ
և աշխատանքը հատուցելու նորմաներ սահմանելը,
ըստ կորցրած ժամանակի տևողության, աշխատանքի
վորակի ու բանվորական ուժի կալիֆիկացիայի հաշ-
վառման. 2) աշխատանքը կազմակերպելու սոցիալիս-
տական ձևերի-մրցման, հարվածային բրիգադներին,
արտադրական խորհրդակցություններին, շաբաթոր-

յակներն, կոլտնտեսական հանդիսական պլանի դար-
գացումը. 3) անձնական և կոլեկտիվ շահագործում-
ածուլթյան ապահովումը՝ աշխատանքի արդյունքներով
(յեկամտի ճիշտ բաշխում, մրցանակները, գանձում-
ներ) . 4) տնտեսության մասնագիտացումը:

2-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ: Կոլտնտեսությունների ազ-
րանքայնությունն ու յեկամտաբերությունը, վորպիս
ներկոլտնտեսական կուտակման գլխավոր աղբյուր,
բարձրացնելու խնդիրը՝ կոլտնտեսությունն ընդար-
ձակելու համար: Պրոլետարական պետության ոգնու-
թյունը կոլտնտեսություններին: Կոլտնտեսություն-
ներին պետության տված վարկերի չափը: Աջ ապո-
րունիստների պնդումների սնանկությունն այն մասին,
թե կոլտնտեսություններն «ուրիշ խնամքին գոնվող»
սպառողներ են: Պետության կողմից կոլտնտեսու-
թյուններին տրված վարկերի նպատակահարմար ոգ-
տագործումն ու ժամանակին այն մարելու կարելի-
ությունը: Աշխատանքի հատուցումը կոլտնտեսու-
թյուններում, համաձայն վերջիններիս արտադրու-
թյունն ընդարձակելու անհրաժեշտության: Կոլտն-
տեսականների նյութական մակարդակի բարձրացու-
մը՝ արտադրությունն ընդարձակելու և բերքատու-
թյունը բարձրացնելու հիման վրա: Յեկամուտն ըստ
փայերի, չնչի, արտադրական միջոցների և այլն
բաշխելու անթույլատրելիությունը, մի բաշխում, վոր
կոլտնտեսություններում անհավասարությունը խո-
րացնում և պակսեցնում և կոլտնտեսականների աշխա-
տանքի արտադրողականությունն ու նրանց շահագը-
րովածությունը դեպի արտադրությունը: Կոլտնտե-
սության յեկամուտը վորպես աշխատավարձ բաշխելու
անթույլատրելիությունը: Հավասարեցուցիչ տե-
ղեցների ոգտագործումը կուլակների կողմից՝ կոլ-
տնտեսությունները քայքայելու համար: Կոլտնտե-
սություններում աշխատանքը հատուցելու հիմնական
սկզբունքները. ա) ըստ աշխատած ժամանակի, բ) ըստ
կատարած աշխատանքի չափի, գ) ըստ աշխատանքի

կվալիֆիկացիայի ու գործի վորակի: Աշխատանքը
բնականով կամ դրամով հատուցելը: Ավանսավորումն
ու տնտեսական տարվա վերջին վերջնահաշիվ տալը:
5 տոկոսային ֆոնդը կոլտնտեսություն բերած գույքի
համեմատ բաշխելու նշանակությունը: Պրոլետարան,
ալան-թալանի, վորոչ կոլտնտեսությունների կողմից
բերքն ու ալրանքային ավելյուրդը թագցնելու տե-
ղեցների դեմ պայքար մղելը և բերքն առանց կոլ-
տնտեսականների բաշխելու մասին բյուրոկրատական
վորոշումների անթույլատրելիությունը:

Կոլտնտեսությունների համայնական ու անհատա-
կան միջոցների հարաբերականությունը: Մուծանք-
ների ու մասնատրումների չափն ու ձևերը, համաձայն
կանոնադրության ու Կոլտնտեսությունի ցուցմունքնե-
րի: Կոլտնտեսների համայնացրած ֆոնդերն ավելացնելու
անհրաժեշտությունը: Յեկամտի աշխատի բաշխման
անթույլատրելիությունը, յերբ կոլտնտեսականների
տնտեսությունների անհատական մասը զարգանա ի
վնաս համայնացրած տնտեսության զարգացման կամ
նույնիսկ այս վերջինից անցնի: Աշխատի կոլտնտե-
սությունը կեղծ կոլխոզ դառնալու վտանգը: Կոլտն-
տեսության ալրանքայնությունը բարձրացնելու և
պետության առաջ պարտականությունները ժամանա-
կին կատարելու անհրաժեշտությունը: Բերքը ճիշտ
բաշխելու նշանակությունը՝ կոլեկտիվացման հետա-
դա զարգացման և անհատականներին կոլտնտեսու-
թյունների մեջ դրավելու համար: Տրոցկիստական ու
աջ ուլորտունիստական սխալները՝ բերքը բաշխելու
պրակտիկայում:

6-րդ ԹԵՄԱ: ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔԸ
ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ:

1-ին ՊԱՐԱՊՄՈՒՆՔ: Խորհրդային պետությունը,
վորպես բուրժուական պետությունից սկզբունքորեն
տարբերվող պետության նոր տիպ: Պրոլետարական

դիկտատուրայի մասին ունեցած հատկացողութիւնը: Խորհրդային պետութիւնը վորպես դեմոկրատիայի բարձր ձև, պրոլետարական իսկ դեմոկրատիայի: Խորհրդային պետութիւնը, վորպես չահագործողների դեմագործութիւնը ճշելու ապարատ: Խորհրդային պետութիւնը, վորպես բանվոր դասակարգի և դուռդական չքավորի ու միջակ գյուղացիութեան դաշինքի ձև, բանվոր դասակարգի ղեկավար դերով՝ սոցիալիստական հասարակարգ կառուցելու և դասակարգերը վտնջացնելու համար: Խորհուրդները պրոլետարական դիկտատուրայի օրգաններն են: ԽՍՀՄ-ն ազգային իրավահամարութիւնն իրականացնելու ձևն է:

2-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ. Խորհուրդների դերն ու աշխատելու վերակառուցողական շրջանի և դասակարգային պայքարը սրվելու պայմաններում կապիտալիստական տարրերի դեմ սոցիալիստական հարձակումը ծախսելու և արդյունաբերութեան ու գյուղատնտեսութեան սոցիալիստական շինարարութեան գործում: Գալառները վերացնելու և ղեկավարութիւնը շրջաններին մոտեցնելու նշանակութիւնը՝ շրջանները, վորպես գյուղի սոցիալիստական վերակառուցման գլխավոր ողակ, ամրապնդելու համար: Խորհուրդների աշխատանքը պետական ամբողջ ապարատը վերակառուցելու խնդիրը՝ յերկրի սոցիալիստական վերակառուցման բայելելիկյան տեմպերի համար մասսաներին զորակոչելու լոգոնգով:

Բյուրոկրատիզմի ու վնասարարութեան դեմ մղվող պայքարը, վորպես դասակարգային պայքարի առանձին ձև: Բյուրոկրատիզմի դասակարգային ծագումը: Բյուրոկրատիզմի վտանգը: Բյուրոկրատիզմի դեմ պայքարելու գլխավոր ուղիները—ինքնաքննադատութեան ծախսման կատարումն ստուգելու գործի կազմակերպումը, ապարատի գտումը, բանվոր դասակարգից առաջացած առաջավոր աշխատակիցներին ներքեից ապարատի համար առաջ քաշելը: Բանվորներին պետական կառավարչութեան գործին մասնա-

յական կերպով մասնակից դարձնելու նոր ձևերի (բանվորական շեֆութիւն, «թեթև հեծելազորի» խմբակներ և այլն) գաղափարը:

Յերեսը դեպի կոլտնտեսական շինարարութիւն դարձնելը, վորպես խորհուրդների առաջնակարգ աշխուրդը գյուղում: Խորհուրդները հաստատած կոլեկտիվացման շրջաններում: Խորհուրդների աշխուրդը բատրակութիւնն ու չքավորութիւնը կազմակերպելու գործում:

Այլ ոպրտունիքի, հակահեղափոխական տրոցկիզմի ջախջախումն ու «ձախ» խոտորումների դեմ պայքար մղելը, վորպես բյուրոկրատիզմն ապարատից արմատախիլ անելու, սոցիալիստական շինարարութեան համար միլիոնավոր մասսաների ստեղծագործակտիվութիւնը զորակոչելու պայքարի հաջող պայմաններ: Այլ-«ձախական» բլոկի (Սիւրցով-Լոմինսկ) բամբասանքները պետապարատի հասցեյին:

Խորհուրդների վերնտրութեան քաղաքական նըշանակութիւնն ու հերթական կամպանիայի աշխուրդները:

7-ՐԴ ԹԵՄԱ: ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԴԱՐԱՇՐԱՆՈՒՄ.

1-ԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ: Բանվոր դասակարգի և նրա հետեից գնացող աշխատավոր միասայի հակայական ստեղծագործակտիվութիւնը, վորպես կուսակցութեան նվաճումների հիմնական աղբյուր՝ արդյունաբերութեան ու գյուղատնտեսութեան բնագավառում սոցիալիզմ կառուցելու գործում: Մասսայական անցումը աշխատանքի կազմակերպման սոցիալիստական նոր ձևերին—առցմըցում և հարվածաշնութիւն:

Սոցմըցման ու հարվածաշնութեան շարժումը բարձր աստիճանի վրա դնելը, վորպես կուսակցութեան ու արհմիութիւնների կարեւորագոյն խնդիրներ: Այս շարժումը բանվորների դասակարգային դաս-

տիրապէման իսկական դպրոցների վերածելու անհրաժեշտութիւնը: Ձեռնարկութիւններում աշխատող կոմունիստներին ու կոմյերիտականներին կարճ ժամանակամիջոցում գլխովին սոցմըցման ու հարկաժանութեան մեջ գրավելը: Հանդիսական արդիւնաւոր ծաւալման նշանակութիւնը՝ սոցիալիստական շինարարութեան բաղկեւորական տեմպերի համար պայքարելու գործում:

Սոցմըցումն ու հարկաժանութիւնն արհմիութիւնների ամբողջ աշխատանքն աշխուժացնելու և բանվորական լայն մասսաներին արտադրութիւն կառավարելու գործին մասնակից դարձնելու միջոցն ու հիմնական ողակն են: Հարկաժանութիւնն բրիգադները, վորպես արհմիութիւնների վերակառուցման հիմնական բաղա:

ՀԱՄԿԽ-ի նախկին կազմի ուղղորտունիստական ղեկավարութեան կողմից նոր խնդիրների իրականացմանն ընդդիմանալը, մի ղեկավարութիւն, վոր ուղղորտունիստական տրեդ-յունիոնիստական ապաքաղաքականութեան տրամադրութիւններ, կուսակցութիւնից ու սոցիալիստական տնտեսութիւն կառուցելուց կտրուելու հող եր մշակում, աշխատելով արհաւիրման ասպարիդում աջ ուղղորտունիստական տարրերի համար հենակետ ստեղծել՝ Լենինի կուսակցութեան ու վերջինիս լենինյան կի գլխավոր գծի դեմ պայքարելու գործում:

Լենինյան բաղկեւորական ղեկավարութիւնն արհաւիրմամբ ամրապնդելու համար կի ձեռք առած ու համագործակցութիւն կողմից համախմբութիւն ստացած միջոցները:

Սորհրդային արհմիութիւնների միջազգային աշխատանքը: Աշխատավորական լայն մասսաների ինտերնացիոնալ դաստիարակութիւնը:

2-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ: Արհմիութիւնների դերն ու անելիքը գլխաւորապէս սոցիալիստական վերակառուցման գործում: Գլխաւորապէս սո-

ցիալիստական վերակառուցման գործում սրբաշունչ ընթացի դերը տրեդ-յունիոնիստներին, ուղղորտունիստներին թերադնահատելու դեմ միջոցառումներ: Արհմիութիւնների անելիքները բանվորական ուժ պատրաստելու գործում, բարձրարտադրութիւն դեմ պայքարելու գործում, բանվորական մատակարարումը բարելաւելու գործում:

Հողանտամիութեան բանվորների դերն ու անելիքը: Միութեան անդամների թիւը, նրանց կազմը (բարակ, խորհրդատեղական բանվոր): Արհմիութիւնների, մասնավոր Հողանտամիութեան անելիքները կոլտնտեսական նոր վերելքի ասպարիդում:

«25 հազարի» նշանակութիւնը կոլտնտեսութիւնները և Հողանտամիութիւնն ամրապնդելու համար: 25 հազարականները, վորպես գլխաւորական հիմնական մասսաների սրբաշունչ արտադրական ղեկավարութեան գործում իրենց արդարացրած ձև:

Նրանց արդյունաբերական ձեռնարկութիւնների աշխատանքի փորձն ու մեթոդները խորհրդատեսութիւններ ու կոլտնտեսութիւններ փոխադրելը:

Միութեան անդամների գրադիտութիւնն ու կուլտուրական ընդհանուր մակարդակն արագ կերպով բարձրացնելու խնդիրները:

Սորհրդատեսութիւնների համար վորակյալ բանվորների կազմեր ունենալու ասպարիդում պայքար մղելը, տրակտորավորներ, կոմբայնավորներ պատրաստելը: Կոլտնտեսութեան կազմակերպչներ պատրաստելն ու առաջ քաշելը: Բրիգադների առաջնորդմը կոլտնտեսութիւններին ոգնութիւն կազմակերպելու համար: Բարակութիւնը բարակա-չբարակական խմբակների աշխատանքներին մասնակից դարձնելու խնդիրը: Կուսակցական կերպութիւնների և այլ միութիւնների կողմից Հողանտամիութեանն ոգնութիւն ցույց տալու անհրաժեշտութիւնը:

**Ց-ԴԴ. ԹԵՄԱ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱ-
ԿԱՐԳԻ ՍՎԱՆԳԱՐԴՆ Ե ՅԵՎ ՊԱՅԲԱՐ ՇԵՐԿՈՒ
ՃԱԿԱՏԻ ՎՐԱ.**

1-ԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԻ: Բանվոր դասակարգն արդի
հասարակության ամենաառաջավոր հեղափոխական
դասակարգն է: Բանվոր դասակարգի պատմական ա-
նելիքը: Լենինյան թեորիայով զինված՝ մարտական
կուսակցության գոյությունը, վորպես այս խնդիրը
բանվոր դասակարգի կողմից կատարելու հիմնական
պայման: Կոմունիստական կուսակցությունը բանվոր
դասակարգի ավանդարդի առաջավոր, ղեկավար մա-
ոը: Կոմունիստական կուսակցությունը, վորպես իս-
կական ինտերնացիոնալիզմի միակ կուսակցություն:

Կուսակցությունն ու պրոլետարիատի մասսայա-
կան կազմակերպությունը: Խորհուրդները, արհմիու-
թյունները, կոոպերացիան, Կոմբեյրիտմիությունը
կուսակցությունից ղեպի մասսաները տանող շարժիչ
փոկեր են:

Կուսակցության պայքարը՝ բանվոր դասակարգի
մեջ առաջացող՝ նեղ-համըյարական ու հետամնաց
տրամադրությունների դեմ: Համկ (բ) ԿԿ-ն ԽՍՀՄ-ի
միասնական ու միակ կուսակցությունն է. կուսակ-
ցության զաղսկարական ու կազմակերպական միաս-
նությունը պահպանելու և ամրապնդելու համար պայ-
քար մղելը, վորպես կուսակցության կողմից պրոլե-
տարական ղեկատարության ղեկավարության խնդիրն
ի կատար ածելու հիմնական պայման: Յերկաթե դիս-
ցիպլինան, վոր կուսակցության կյանքում կուսակ-
ցության անդամների ղեկավարից ու ակտիվ մասնակցու-
թյան վրա յե հանվում, վորպես կուսակցության
միասնությունն ու ապահովությունը պահպանելու և
ամրապնդելու հիմնական պայման:

Կուսակցությունը պառակտման հասցնելու, հա-
կապրոլետարական նոր կուսակցություն ասեղծելու
ֆրակցիոնականության դեմ պայքար մղելը: Միաս-

նություն հասկացողության տարբերությունը՝ Բայ-
շևիկներին ու մենշևիկներին մեջ: Պայքարը կուսակ-
ցության համար՝ ընդդեմ տրոցկիստական ոպոդիցիա-
նի:

Ներկուսակցական դեմոկրատիան. սրա ձևերը
կուսակցության պատմության տարբեր շրջաններում:
Բայշևիկյան ինքնաքննադատության եյուլթու-
նըն ու առանձին նշանակությունը՝ յերկրի սոցիալիս-
տական վերակառուցման պայմաններում: Ինքնաքննա-
դատության լողունդի ոպորտունիստական խեղաթյու-
րումը՝ աջ և «ձախ» ուլլոնիստների կողմից:

Դեմոկրատական ցենտրալիզմը, վորպես կուսակ-
ցությունը կազմակերպչորեն կառուցելու սկզբունք:
Կուսակցության կանոնադրության հիմնական կանոն-
ները:

Կուսակցության բջիջը, վորպես կուսակցական
գլխավոր կազմակերպություն: Կուսակցական բջիջնե-
րի շինարարության արտադրական սկզբունքը՝ Համկ
(բ) Կ կոլտնտեսական բջիջի կանոնադրությունը:

Աջ և «ձախ» ոպորտունիստների անջատումը լե-
նինիզմից՝ լենինյան բայշևիկյան կուսակցության
հարցում:

Կուսակցական կազմակերպությունների աշխա-
տանքի վերակառուցման խնդիրը՝ սոցիալիստական
շինարարության բայշևիկյան տեմպերի համար մաս-
սաները գորակոչելու նշանաբանով:

Կուսակցական աշխատանքի ծանրության կենտ-
րոնը՝ ձեռնարկություն, ցեխ և բրիգադ, իսկ գյու-
ղում՝ կոլտնտեսություն և խորհտնտեսություն փո-
խադրելը: Տնտեսական պլանները կատարելու համար
պայքար մղելը, վորպես ձեռնարկուլթյուններում և
խորհտնտեսություններում կատարվող կուսակցական
աշխատանքի մարտական գլխավոր խնդիր: Ձեռնար-
կություն, խորհտնտեսության ու կոլտնտեսության մեջ
կոմունիստների անկասկած պարտականությունը՝ լի-
նել արտադրական պլանն իրականացնելու պայքարի

նախակարգային և լինել հարմարապես: ՀամԿ (բ) և կոլտնտեսական բջիջների անելիքները նոր կրթություն սակն վերելքի ժամանակ:

Գյուղական կուսակազմակերպության քանակական ու վորակական ամրապնդումը, վորպես կուսակցության հաջող աշխատանքի անհրաժեշտ նախադրյալ՝ գյուղատնտեսություն սոցիալիստական վերակառուցման գործում:

Կուսակցության անդամների դադարախախտման քաղաքական մակարդակի բարձրացումը, վորպես կուսանդամների փորձվածությունության ու ակտիվություն կարևորագույն պայմաններից մեկը՝ քաղաքական աշխատանքի ասպարիդում: Այս խնդրի առանձնահատուկ նշանակությունը՝ վերակառուցողական շրջանի պայմաններում:

Կուսակցական կադրերի ամրապնդումն ու պատրաստումը, վորպես արդիականություն կարևորագույն խնդիր:

Կուսակցության անելիքը՝ իր սոցիալական կազմի հետագա բարելավման գործում:

2-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆԻ: Կուսակցության պատմությունը բաղկավորվում է պայքարի պատմությունն և՛ հեղափոխական մարքսիզմ-լենինիզմի համար՝ ընդդեմ բացահայտ ոպորտունիզմի և ընդդեմ «ձախ» ֆրադուզիզմի: Այլ և «ձախ» թեքումները կուսակցության մեջ, վորպես պրոլետարիատին թշնամի դասակարգային ուժերի կողմից կուսակցությունը ճշելու արտահայտություն: Յերկու ճակատի վրա պայքարելը, վորպես կուսակցության լենինյան գիծն իրականացնելու պայման: Տրոցկիզմի գլորումը դեպի հակահեղափոխական, մենշևիկյան դիրքերը: Տրոցկիզմի ջանքատուժը՝ կուսակցության կողմից յերկու ճակատի վրա պայքար մղելու հիմունքով: 15-րդ կուսհամագումարի վորոշումը՝ տրոցկիստներին կուսակցությունից հեռացնելու մասին:

Տրոցկիստների նկատմամբ հաշտվողական տրամադրությունների անհանդուրժելիությունը՝ կուսակցության մեջ, վոր ամենից առաջ արտահայտվում է բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի թերահաստատումով: Հետագայում վճռական պայքար մղելու անհրաժեշտությունը՝ տրոցկիզմի նկատմամբ յերեման յեկող հաշտվողական տրամադրությունների դեմ, տրոցկիզմը գործնականում վերածնելու, միջակների նկատմամբ տրոցկիստական հարաբերություն վերածնելու փորձերի դեմ:

Այլ թեքումը, վոր ուրեկտիվորեն կուլակություն ագենտության և, կապիտալիստական տարրերի վրա ամբողջ ճակատով ծավալուն հարձակում գործելու ներկա ժամանակաշրջանում, վորպես գլխավոր վտանգ կուսակցության մեջ: Այլ թեքման գիծը, վորպես յերկրի կուլակ-կապիտալիստական տարրերին անձնատուր լինելու գիծ: Սոցիալիզմի շինարարության տապալումն ու կապիտալիզմի վերականգնումը մեր յերկրում, վորպես ալ թեքման անխուսափելի արդյունք, յեթե այս գիծն իրականանար: Այլ ուկլոնիստների գլորումը դեպի այն տեսակետը, վորով ժխտում են գյուղացիական գլխավոր մասնաերին սոցիալիզմի գործի մեջ դրավելու հնարավորությունը:

Այլ պանիկյորները և «ձախ» ոպորտունիստներն ու տրոցկիստները, ինչպես և թեքումների նկատմամբ հաշտվողական վերաբերմունք ցույց տվողները, վորպես պրոլետարիատի վրա բուրժուական և մանր-բուրժուական ազդեցություն արտահայտողներ: Թեքումների դեմ յերկու ճակատի վրա ամենամճռական, անհաշտ ու անխնա պայքար մղելը, վորպես հաղթական առաջխաղացման գլխավոր պայման: Պայքարը հաշտվողական տարրերի դեմ, վորոնք չեն հասկանում յերկու ճակատի վրա վճռական պայքար մղելու անհրաժեշտությունը:

Ոպորտունիստների նոր մանյովր-յերկերեսանություն բանեցնելը: Յերկերեսանություն և կուսակցու-

Թյանը խաբելու դեմ անխնա պայքարելու անհրաժեշտությունը, առհասարակ բոլոր նրանցից, ովքեր խոստովանում են իրենց սխալը, կուսակցության գլխավոր գիծն ապօրինի կերպով պաշտպանելով ու կիրառելով՝ գործնականում ապացուցել իրենց խոստովանության ճշտությունը: Աջ-«ձախական» անակցվունք բլոկը, վերջինիս պլատֆորմն ու յերկերեսանի հանցագործ աշխատանքը՝ հանդես կուսակցության:

Անշեղ պայքարի անհրաժեշտությունը՝ տեսական ու գործնական աշխատանքներում յերկուսն յեկող ու պորտոնիստական արտահայտությունների դեմ:

16-րդ համագումարի վերջումը՝ ալ ոպոզիցիայի տեսակետների անհամատեղելիությունը Համ Կ (բ) Կ պատկանելու հետ և յերկերեսանությունը մերկացնելու անհրաժեշտության մասին:

9-րդ Թեմա: ԻՆՏԵՐՎԵՆՅԻԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԽՍՀՄ-Ի ԴԵՄ ՅԵՎ ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

Տնտեսության կապիտալիստական սխտեմի հակասական բնույթը: Պարբերաբար կրկնվող՝ կործանիչ ճգնաժամերը, վորոնք, իբրև կապիտալիզմի անդամաճան ուղեկիցներ, առաջ են գալիս հիշյալ հասություններից: Ճգնաժամերի կործանիչ ազդեցության գարգացումը, ըստ կապիտալիզմի գարգացման չափերի:

Բանվոր դասակարգի կապիտալիստական շահագործման գարգացումը և կապիտալիզմի գարգացմանը զուգընթաց, բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև յեղած անդնդի խորացումը: Աշխատանքի որվա ամբարշումը, ջրոնիկական գործադրկության աճումն ու պրոլետարիատի աղքատացումը: Կապիտալիստական ուսցիոնարացման ելությունը:

Պրոլետարիատի քանակական աճումը, միաժամանակ և հեղափոխականացումը, ըստ կապիտալիզմի գարգացման չափերի:

Կապիտալիզմի անկման անխուսափելիությունը՝ իրեն յուրահատուկ և իր կողմից գարգացվող հակասությունների ազդեցութամբ ու իր կողմից սնուցվող հեղափոխական ուժերի հարվածների տակ:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը: Հակասությունների մերկացումն ու սրումը՝ իմպերիալիստական գլխավոր յերկրների միջև, հաղթող յերկրների ու պարտվող յերկրների միջև, իմպերիալիստական յերկրների և դադութային ու ստորագաս յերկրների միջև, բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև, ԽՍՀՄ-ի և իմպերիալիստական աշխարհի միջև:

ԽՍՀՄ-ի ու կապիտալիստական պետությունների հարաբերությունը: ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարության նվաճումները, վորպես կապիտալիստական ստաբիլիզացիան (կայունացումը) խարխիղ ֆակտոր և վորպես միջադպային հեղափոխության շարժիչ ուժ: Գաղաթնակետին հասնող՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամն ու ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարության նվաճումները, վորպես ԽՍՀՄ-ի վրա իմպերիալիզմի հարձակումն ու ժեղացնելու ֆակտոր:

Ինտերվենցիայի նախապատրաստումը, վորպես միջադպային իմպերիալիզմի պայքարը սրելու ձևերից մեկը՝ ամբողջ ճակատի վրա սոցիալիզմի ծավալուն հարձակման շրջանում: Վնասարարությունը, վորպես դասակարգային պայքարը սրելու և Խորհրդային Միության դեմ ինտերվենցիա պատրաստելու ձևերից մեկը: «Արդյունաբերական կուսակցությունը» պրոլետարական դատարանի առաջ: Վնասարարական կազմակերպությունների՝ կապը սպիտակ-վտարանդիականության («Առարդ») և ֆրանսիական իմպերիալիզմի հետ: «Արդյունաբերական կուսակցություն» ու կոոդերատիվչինան (նրա ծրագրի ու տակալիկայի մերկացումը), իբրև գենը՝ իմպերիալիստների ձեռքին:

Պրոլետարներին մասնագետ կադրեր պատրաստելու խնդիրները:

Պատերազմը խՍՀՄ-ի դեմ, վորպես ընթացիկ մոմենտի գլխավոր վտանգ: Միջազգային պրոլետարիատի ու խՍՀՄ-ի բանվոր դասակարգի անելիքը, պատերազմի վտանգի հետեւանքով:

10-րդ ԹԵՄԱ. ԱԳՐՈ ՅԵՎ ՋՈՈԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Բուսականություն: Հող: Բույսերի գոյության պայմանները—ող, ջուր, լույս, տաքություն և սնունդարար առարկաներ: Ինչ բան է հողը: Տվյալ վայրի հողը ու իր հատկութիւնները:

2. Հողի մշակումն ու պարարտացումը: Հողը մշակելու նպատակը: Մշակելու ձևերը—վար, փոցի և այլն: Հանգստացող հողերը: Սրանց մշակելու նշանակութիւնը: Անանափարն ու տափաները: Ինչու պետք է հողը պարարտացվի: Գոմարը, հանքային պարարտանյութերը: Սեվահող տեղերում հողին կիր տալու նշանակութիւնը:

3. Ցանքի համար սերմեր պատրաստելն ու ցանքը: Ցանքանյութերի հատկութիւնը: Հացահատիկի զտումն ու տեսակավորումը: Հատիկի չոր և թաց ախտահանումը: Տվյալ վայրի մշակութիւնների ցանքը, ցանքի ժամանակն ընտրելը, ցանքի յեղանակն ու սերմերի պահելը: Մոլախոտերն ու սրանց դեմ պայքարելու միջոցները:

4. Գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարելը: Տվյալ վայրի բույսերի սնկային հիվանդութիւնն ու սրա դեմ կռիւն ու միջոցները: Տվյալ վայրի վնասակար միջատները, սրանց հասցրած վնասըն ու սրանց դեմ կռիւն ու միջոցները:

5. Ցանքափոխութիւն: Բույսերի հիմնական փոփոխութիւնն ու ցանքափոխության նշանակութիւնը: Տվյալ վայրի կոլտնտեսության ու խորհտնտեսության ցանքափոխութիւնը:

6. Անասուն պահելն ու խնամելը: Անասուն պահելու անհրաժեշտ պայմանները: Լուսի, ողի, տաքության և այլ պայմանների նշանակութիւնը: Անասունների գոմեր կառուցելը: Անասունների խնամելու գլխավոր կանոնները:

7. Կերակրելը: Չափը (նորմա): Կերը գլխավոր գրուպաների բաժանելն ու կերի ամեն մի գրուպայի նշանակութիւնը՝ զանազան անասուններ կերակրելիս (կոպիտ, հյութալի և խտացրած): Կերը մարսելու հասկացողութիւնը, զանազան կերերի գնահատութիւնն ու համեմատութիւնը, ըստ անդարարության: Կերի ռուսական միավորը՝ պահող և արդյունավետ կերի հաշիվը: Կերի ամարանոցներ ստեղծելու սկզբունքը:

8. Բուծելը: Մաքուր բուծելն ու իրար խառնվելը: Ժառանգականութիւնը: Փոփոխականութիւնն ու ընտրութիւնը՝ ցեղական ու առողջ սնամանապահութիւն կազմակերպելու գործում:

9. Կերի հայթայթում: Ոտացանութիւն: Կերի սիրոսացում: Մարգագետիններն ու սրանց բարելավելու նշանակութիւնը:

10. Անասունների վարակիչ հիվանդութիւնները: Այս հիվանդութիւնների պատճառն ու տարածումը: Իմունիտետի (պատվաստումով ապահովելու) հասկացողութիւնը: Վարակիչ հիվանդութիւնների դեմ կռիւն ու միջոցները: Պետական ու հասարակական միջոցառումները՝ վարակիչ հիվանդութիւնների դեմ: Անասնաբուժական-սանիտարական վերահսկողութիւնը:

11. Յեղրափակիչ գրույց. ագրո ու զոոտեխնիկական պարզ միջոցներ: Ագրո-զոոտեխնիկական միջոցները լայն չափով իրականացնելու հնարավորութիւնը՝ գյուղատնտեսութիւնը կոլեկտիվ, սոցալիստական ձևով վարելու պայմաններում միայն:

I քեմայի շուրջը: ՈԼԽՈՎՈՅ.—Լենինի գրքի աշխարհը», գլ. III, հջ. 141-163:

ՍՍՍՀԻՆ.—Համկ(բ)Կ. գեկուցումը XVI համագումարին, գլ. II—«Սոցիալիստական շինարարության հարանուն վերելքն ու ԽՍՀՄ-ի ներքին կացությունը». ագրարային ֆաղափականության հարցերի շուրջը»:

ՅԱԿՈՎԼԵՎ.—Զեկուցում ՀամկԿ XVI համագումարին XVI կուսհամագումարի բանաձևը. 1) ԿԿ հաշվետվության առթիվ. 2) կոլտնտեսական շարժման մասին: ԿԿ. և ԿՎՀ-ի դեկտեմբերյան միացյալ պլենումի բանաձևը՝ 1931 թ. ժողտնտեսության պլանի մասին:

II քեմայի շուրջը:—ՈԼԽՈՎՈՅ.—«Լենինի գրքի աշխարհը», հատվ. I, II, III և IV

Положение о ячееках в колхозах, «Правда» 17-IX 1930 թ.

XVI կուսհամագումարի բանաձևը՝ կոլտնտեսական մասին, հատվ. I, II, III և IV.

Резолюция IV пленума МК. ВКП(б).

ՅԱԿՈՎԼԵՎ.—Զեկուցում Համկ(բ)Կ. XVI համագումարին:

Методоразработки о задачах партии и московской организации к весенней посевной кампании. Издан. Программно-методического бюро МК

ՍՍՍՀԻՆ.—«Մեծ բեկման տարին»: «Գլխավորությամբ հաջողություններից»: «Պատասխան ընկ. կոլտնտեսականներին»: Զեկուցում Համկ(բ)Կ. XVI համագումարին, հատվ. II:

Համկ(բ)Կ. վորոշումը՝ կոլտնտեսությունների արտոնությունների մասին («Պրավդա» 3-IV 1930 թ.):

Համկ(բ)ԿԿ. վորոշումը՝ ՄՏԿ. մասին:

III քեմայի շուրջը:—ԿՆՐԺԵՆՑԵՎ, ՅԵՎ. ԼԵՆԻՆՑԵՎ, գլ. V, հջ 91-95, գլ. IV, հջ 100-104:

ՅԱԿՈՎԼԵՎ.—Զեկուցում Համկ(բ)Կ.ԿԿ. XVI համագումարին:

XVI կուսհամագումարի բանաձևը՝ կոլտնտեսական մասին, հատվ. III և IV:

Համկ(բ)Կ.ԿԿ. վորոշումը՝ խորհրդային կոլտնտեսության մասին, «Պրավդա» 29-VII 1930 թ.

Постановление ЦК ВКП(б) о строительстве и руководстве МТС, «Известия» от 13-IX 1930 г.

IV քեմայի շուրջը.—ՈԼԽՈՎՈՅ, գլ. VП

ՅԱԿՈՎԼԵՎ.—Զեկուցում Համկ(բ)Կ. XVI համագումարին, հատվ. IV

ՍՍՍՀԻՆ.—Զեկուցում Համկ(բ)Կ. XVI համագումարին, հատվ. II

К политике о ликвидации кулачества как класса («Звезда», 21 января 1930 г.), «Գլխավորությամբ հաջողություններից»: «Պատասխան ընկ. կոլտնտեսականներին»:

XVI կուսհամագումարի բանաձևը՝ կոլտնտեսական շարժման մասին:

V քեմայի շուրջը: ՈԼԽՈՎՈՅ.—«Լենինի գրքի աշխարհը», գլ. VП:

Գյուղատնտեսական արտելի որինակելի ծրագիր:

АНИКИН.—«Организация труда в колхозах»

ՅԱԿՈՎԼԵՎ.—Զեկուցում XVI կուսհամագումարին, հատվ. II, § 2 և 3.

IV քեմայի շուրջը: «Լենինի գրքի աշխարհը» գլ. X

ԿՍԳԱՆՈՎԻԶ.—Զեկուցում կուսակցության XVI համագումարին, հատվ. II:

ՄՈԼՈՏՈՎ.—«Կոլտնտեսական շարժումը» XVI կուսհամագումարի բանաձևը՝ Կ.Կ հաշվետվության առթիվ:

ԱՆԳԱՐՈՎ.—«Գյուղխորհուրդն ու կուլակի վերացումը՝ վորպես դասակարգ»:

Կ.Կ դեկտեմբերյան պլենումի բանաձևը՝ խորհուրդների վերընտրության մասին:

Доклад т. КАГАНОВИЧА на Московском парт-активе («Правда») от 30-ХІ 1930 г.

VII բեմայի շուրջը: **КЕРЖЕНЦЕВ И ЛЕОНТЬЕВ**, гл. II, стр. 34--36.

ШВЕРНИК.—«О задачах профсоюзов и реконструктивный период».

XVI կուսիամագուսարի բանաձեւը՝ արհմիությունների անկիւնների մասին

ГЛАДУН.—«Индустриализация СССР. и сельхозлесрабочие»

VII բեմայի շուրջը: Ուկրաինա. —«Լենինի գլխի աշխատանքներ», գլ. XI:

ՍՏԱԼԻՆ.—Զեկուցում XVI կուսիամագուսարին, հատվ. III:

XVI կուսիամագուսարի բանաձեւը՝ ԿԿ. հաշվետվության անթիվ:

IX բեմայի շուրջը: Ուկրաինա. —«Լենինի գլխի աշխատանքներ», գլ. XII:

ՍՏԱԼԻՆ.—Զեկուցում կուսակցության XVI համագումարին, հատվ. I:

Удар по интервентам (обвинительное заключение по делу «Промпартии». брошюр).


Приговор Верховного Суда по делу «Промпартии» («Правда» от 8 Декабря 1930 г.).

Речь государственного обвинителя тов. **КРЫЛЕНКО** («Правда» от 8 и 9 декабря 1930 г.).

КОНДРАТЬЕВЩИНА. — Изд. Комкадемии.

КОНДРАТЬЕВЩИНА, ЧАЯНОВЩИНА, СУХАНОВЩИНА, Изд. Междунар. Аграрн. И—та.

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.



31.934